ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ[58]

Վիկտորյա Առստամյան

Բանալի բառեր՝ *բնակչություն, եկամուտներ, աղքատություն, տնային տնտեսություն, աշխատանքի վարձատրություն, տրանսֆերտներ, դեցիլային խմբեր:*

Շուկայական տնտեսական համակարգում բնակչության կենսամակարդակը որոշվում է այն եկամուտների ծավալով, որ ստանում են հասարակության անդամները աշխատանքի դիմաց, առևտրային գործունեությունից, սեփականությունից, ընտանեկան տնտեսությունում կատարած աշխատանքից, ինչպես նաև հանրապետական և տեղական բյուջեներից ստացվող սոցիալական հատկացումներից: [1] Ա.Ս. Ռևայկինը նշում է, որ կենսամակարդակն «արտահայտում է ֆիզիկական, բարոյական և սոցիալական պահանջմունքների զարգացման մակարդակը, դրանց բավարարման աստիճանը, ինչպես նաև այդ պահանջմունքների բավարարման և զարգացման համար հասարակության մեջ առկա պայմանները»: [2] Այդ դեպքում կենսամակարդակի համար օգտագործենք մեթոդաբանական ընդհանուր սկզբունք՝ դրանց մեծությունը կազմավորող քանակական և որակական կողմերի միասնությունը: [3]

Անցումը շուկայական տնտեսական համակարգին իր հետ բերել է ծավալուն փոփոխություններ: Եթե ուսումնասիրենք աշխատանքի վարձատրության ցուցանիշները, ապա ակնառու երևում է, որ 1995թ. նկատմամբ 2016թ. այն համարյա կրկնապատկվել է՝ հասնելով 53,3 տոկոսի, իսկ սոցիալական տրանսֆերտները գնալով նվազել են:

Աղյ ուսակ 1.

ԱՀ բնակչության դրամական եկամուտների կառուցվածքը 1995, 2006-2016թթ./%/ [4], [5], [6]

	1995	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Բնակչության դրամական եկամուտները, ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
այդ թվում												
աշխատանքի վարձատրում	27.4	50.0	52.6	56.3	58.7	57.7	53.9	52.0	53.6	54.0	54.2	53.3
սոցիալական տրանսֆերտներ	34.5	16.3	15.3	19.1	20.8	19.3	20.6	20.1	18.4	18.2	17.1	17.2
մուտքերը ֆինանսական համակարգից, եկամուտները սեփականությունից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլն	38.2	33.7	32.1	24.6	20.5	23.0	25.5	27.9	28.0	27.8	28.7	29.5

58 58 Հոդվածն ընդունվել է 03.03.2018:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ տնտեսագիտության, կառավարման և ՏՀ ամբիոնը

Այսինքն՝ պետության կայացման սկզբնական շրջանում բնակչության դրամական եկամուտներում աշխատանքի վարձատրությունը բավականին ցածր էր, իսկ սոցիալական տրանսֆերտների տեսակարար կշիռը բարձր, ինչը տարիների ընթացքում այլ պատկեր ստացավ: Աշխատանքի վարձատրության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2009թ.՝ կազմելով 58.7%, սակայն հաջորդ տարիներին այն ունեցել է տատանողական բնույթ: Այդ ոլորտի վրա «անսովոր» անդրադարձ է ունեցել վերջին շրջանում գրանցված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի ընթացքում բնակչության դրամական եկամուտներում աշխատանքի վարձատրության չափաբաժինը աճել է 7.7 տոկոսային կետով:

Բոլորիս քաջ հայտնի է, որ սկսած 2014թ-ից ԱՀ-ան ԱՎԾ երկրում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու նպատակով սկսել է հարապարակել «ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական - վերլուծական զեկույցը, որի ժամանակ հետազոտվել են 2376 տնային տնտեսություններ: Այն մեզ հնարավորություն է տալիս հնարավորինս իրական տեսնելու մեր երկրի տնտեսական վիճակը: Եվ այսպես, ինչպես արդեն նշվել է բնակչության կենսամակարդակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշը համարվում է տնային տնտեսությունների համախառն եկամուտը, ինչն ամբողջացնում է և՛ ողջ դրամական մուտքերը, և՛ սեփական արտադրության արդյունքների ու անվճար ստացված ոչ պարենային ապրանքների, ծառայությունների դրամական արտահայտությունը: Ուսումնասիրելով ԱՀ տնային տնտեսության եկամուտների աղբյուրները ըստ բնակավայրերի՝ մենք տեսնում ենք որ վարձու աշխատանքից ստացված եկամուտները ամենամեծ չափաբաժինն են կազմում, առավել ևս քաղաքաբնակների համար, եթե 2014թ-ին այն կազմում էր ամբողջական եկամուտների 58.5%, ապա հետագա տարիներն այն աճման միտումով էր և 2015թ-ին 62.5% էր, իսկ 2016թ-ին 66.9%: Եթե դիտարկենք նշված ժամանակահատվածում գյուղաբնակ տնային տնտեսությունների վարձու աշխատանքից ստացված եկամուտների մասնաբաժինը, ապա կտեսնենք, որ 2014թ. այն՝ 1.5 անգամ, 2015թ.՝ 1.3 անգամ և 2016թ 1.8 անգամ ցածր է քաղաքաբնակների ստացվածից: Դրամական եկամուտներում տեսակարար կշռով երկրորդ տեղն են զբաղեցնում պետական թոշակներն ու նպաստները: Այդ ցուցանիշը 2014թ-ին գյուղաբնակ բնակավայրերում կազմում էր դրամական եկամուտների 25.5%, 2015թ-ին՝ 29.0% և 2016թ.-ին 31.4%: Նույն ցուցանիշը քաղաքային բնակավայրերում որոշակիորեն տարբերվում էր և 2014թ.ին այն կազմում էր 20.6%, 2015թ-ին՝ 21.1% և 2016թ.-ին 21.0%: Ոչ դրամական եկամուտների չափաբաժինը գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտներում 2014-2015թթ.կազմում էր 15.7%, իսկ 2016թ.՝ 14.6%: Վերջին ցուցանիշները վկայում են գյուղատնտեսական արտադրանքների դեռևս ցածր մակարդակի մասին: Աղյուսակում 2-ում ներկայացված է տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամական անվանական եկամուտների չափն ու կառուցվածքը:

Աղյուսակ 2.

ԼՂՀ. Տնային տնտեսությունների անվանական եկամուտների տեսակները, 2015-2016թթ. [7] [8]

	Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական (դրամ)					
	Քաղաքային բնակավայր			Գյուղական բնակավայր		
	2014	**2015**	**2016**	**2014**	**2015**	**2016**
1.Դրամական եկամուտներ	48 854	51 215	54563	35363	41073	35614
այդ թվում						
վարձու աշխատանք	29 434	31 949	36 518	19604	24624	20824
ինքնազբաղվածություն	6 698	6 528	4 274	3369	2408	1424
գյուղմթերքի և կենդանիների վաճառք	74	104	377	542	986	1765
սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	66	80	180	17	1	9
պետական թոշակներ և նպաստներ	10 372	10 787	11 453	10689	11929	11197
տրանսֆերտներ	758	664	553	285	202	32
դրանցից՝ ԼՂՀ-ում ապրող բարեկամներից	199	104	7	8	15	15
ԼՂՀ-ից դուրս ապրող	555	509	546	276	182	13
այլ եկամուտներ	1 451	1 104	1 208	856	927	362
2.Ոչ դրամական եկամուտներ	1 425	1 016	1 039	6576	7648	6101
այդ թվում						
սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	1 171	914	937	6395	7548	6039
անվճար ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ	254	103	102	180	100	62
Ընդամենը ամբողջական եկամուտ	50 279	52 232	55 602	41939	48720	41714

Կատարվող ուսումնասիրությունները առավել հետաքրքրական են դառնում, երբ բնակչության եկաուտները դիտարկվում է ըստ դեցիլային խմբերի: Այն մեզ հնարավորություն է տալիս համեմատելու բնակչության ամենախոցելի խումբը ամենաբարձր եկամուտներ ունեցող խմբերին: Այսինքն՝ յուրաքանչյուր հաջորդ խմբում բարձրանում է

եկամուտների մակարդակը: Ստորև բերված աղյուսակը ամփոփ ներկայացնում է տնային տնտեսությունների դրամական եկամուտների դեցիլային խմբերի անվանական եկամուտների շարժընթացը 2014-2016թթ. կտրվածքով:

Աղյուսակ 3.

Դրամական անվանական եկամուտների շարժընթացն ըստ տնային տնտեսությունների դրամական եկամուտների դեցիլային խմբերի 2014-2016թթ.-ին [9] [10]

`		դեցիլային խմբեր ըստ դրամական եկամուտների									
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Դրամական եկամուտներ	2014	9300,2	17411,5	23653,6	29173,4	34072,2	39583,1	46492,3	54490,3	68163,3	105631,7
	2015	10 354	21 169	28 048	34 096	40 376	45 133	51671	62 186	75 006	110 468
	2016	9 565	19 248	25 730	31 842	37 779	43 769	50 180	59 222	72 707	117 531
այդ թվում											
եկամուտներ աշխատանքից	2014	3095,2	9557,8	14184,7	18687,2	21797,1	26424,7	31814,3	39507,2	51028,7	84 036,8
	2015	4 365	11 165	20 398	22 766	24 688	30 109	37 200	46 808	57 963	85 328
	2016	3 124	8 892	16 202	20 528	25 215	28 069	34 783	45 842	55 449	87 637
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	2014	5639,5	7395,1	8725,2	9375,9	11193,9	12398,7	13570,5	11860,7	13191,6	13 856,9
	2015	5 262	8 820	6 781	10 075	14 286	13 109	13 189	13 924	14 484	16 859
	2016	5 878	9 004	9 023	9 910	11 121	14 404	13 836	12 247	14 026	18 977
եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	2014	306,5	139,1	179,1	339,6	316,9	291,9	148,5	452,5	249,2	760,7
	2015	218	106	290	317	394	465	303	39	419	2830
	2016	432	392	437	307	431	679	160	427	1 064	7 194
տրանսֆերտներ	2014	59,1	266,0	139,3	336,1	112,4	378,8	235,4	876,0	1258,3	1624,8
	2015	207	154	-	559	265	146	185	48	1 445	1 594
	2016	76	18	35	-	157	286	550	73	225	1 534
դրանցից՝ ԼՂԴ-ում ապրող բարեկամներից	2014	17,1	91,8	117,7	73,0	0,0	0,0	41,0	196,9	0,0	504,6
	2015	54	154	-	-	-	-	-	-	331	99
	2016	-	18	-	-	-	-	-	-	62	51
ԼՂԴ-ից դուրս ապրող	2014	42,0	174,2	4,1	263,1	112,4	378,8	194,3	673,5	1258,3	1120,2
	2015	78	-	-	443	265	146	185	48	1 000	1495
	2016	76	-	35	-	157	286	550	73	164	1 483
այլ եկամուտներ	2014	200,0	53,5	425,3	434,6	651,8	89,0	723,7	1794,0	2435,6	5352,5
	2015	302	923	579	379	743	1 304	795	1 367	695	3 857
	2016	55	942	33	1 097	855	331	851	633	1 943	2 189

Թոշակներն ու նպաստները դրամական եկամտի հիմնական աղբյուր են հենց առաջին դեցիլային խմբի տնային տնտեսությունների համար, որը 2016թ. կազմել է 61.4% (2015թ.՝ 50.8%, 2014թ՝ 60.6%), իսկ տասներորդ դեցիլային խմբում եկամտի այդ աղբյուրի մասնաբաժինը շատ փոքր է՝16.1% (2015թ.՝ 15.3%, 2014թ՝ 13.1%): Բայց եթե համեմատենք տասներորդ դեցիլը առաջինին, ապա կտեսնենք, որ գումարային առումով տասներորդ դեցիլը ընդամենը 2,5 անգամ է գերազանցում առաջինին: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ տարինրի ընթացքում լավ աշխատավարձ ստանալով հետագայում նրանք ապահովում են իրենց բարձր կենսաթոշակները, առավել ևս վերջին կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում այս բաշխվածությունը ևս հօգուտ տասներորդ դեցիլային խմբին է լինելու:

Աշխատանքից ստացած եկամուտների առավելագույն ցուցանիշը արձանագրվել է X դեցիլային խմբում՝ 74.6% (2015թ.՝ 77.2%, 2014թ՝ 79.6%), ամենացածրը՝ I դեցիլային խմբում՝ 32.7% (2015թ.՝ 42.2%, 2014թ՝ 33.3%): Դիտարկելով մնացած ցուցանիշները՝ տեսնում ենք, որ մեր երկրի բնակչությունն իր եկամուտները ձևավորում է միայն աշխատանքից ստացած եկամուտների և թոշակների ու նպաստների հաշվին: Եկամուտների անհավասարությունը սրում է երկրում աղքատության ցուցանիշները: Այսպես՝ աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան ներկայացված է աղյուսակում:

Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան 2014-2016թթ. [11]

(տոկոսներով)

	Ոչ աղքատ բնակչության մակարդակը	*Աղքատ բնակչության մակարդակը*	*նրանցից՝ ծայրահեղ աղքատբնակչության մակարդակը*
2014	*73.8*	*26.2*	*6.0*
2015	*77.2*	*22.8*	*6.5*
2016	*76.7*	*23.3*	*6.2*

2016թ-ին աղքատության ընդհանուր և ծայրահեղ աղքատության գծերը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար գնահատվել են՝ 35142.0 դրամ (կամ 73.1 ԱՄՆ դոլար) և 23579.8 դրամ (կամ 49.1 ԱՄՆ դոլար): Հնարավոր է արդյոք հաղթահարել աղքատությունը: 2016թ-ի ցուցանիշներով ԱՀ-ը անհրաժեշտ է 3.4 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1,5% կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Իսկ ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 0,7 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3 %-ը՝ ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն:

Իրականում աղքատության վերացումն անիմաստ միջոցառում է դառնում, քանի որ ցանկացած հասարակության մեջ նյութապես ամենաչապահովվածները միշտ էլ իրենց զգալու են աղքատ, ուստի խոսքը հարաբերական ցուցանիշների մասին է:

Այսպիսով՝ եկամուտների պակասն ակնհայտ է, քանի որ տնային տնտեսությունների եկամտի գերակշռող մասը կազմում է աշխատանքի վարձատրությունը և թոշակ-նպաստները, իսկ ինքնազբաղվածությունից ստացված եկամուտներն աննշան են: Անհավասարության մեղմացումը հնարավոր կլինի, եթե պետությունը «հատուկ» եկամտային քաղաքականության արյունքում նվազագույն աշխատավարձի չափը կհամապատասխանցնի աղքատության պարենային գծին, ինչպես նաև նպաստների նպատակայնության աճի էական բարձրացմամբ:

Այս առումով առանձին դեցիլային խմբերի շուրջ տարվող հարկային քաղաքականությունը պետք է վերանայել (Ֆրանսիայի օրինակով) և դեցիլային վերին երկու խմբերի նկատմամբ կիրառել ավելի բարձր հարկային դրույքաչափ (պրոգրեսիվ), իսկ վերջինիս արդյունքում ստացված միջոցները նպատակաուղղել հասարակության խոցելիության բարձր մակարդակ ունեցող խավերին: Այսպիսով՝ եկամուտների բաշխման և վերաբաշխման անհավասարության կրճատումը ԱՀ-ում կարևորվում է թե՛ տնտեսական աճի տևականության ու կայունության ապահովման, թե՛ աղքատության կրճատման ներուժի ապահովման տեսանկյունից:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղուշչյան Հ. Բ., Մակրոտնտեսական կարգավորում, Եր., 2002.
2. Ревайкин А.С., Уровень жизни населения (методология и проблемы регионального исследования), М.: Наука, 1989, стр.11
3. Նույն տեղում, էջ 20
4. ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ 1995-1999թ., էջ 2 http://stat-nkr.am/files/yearbooks/1995_1999/arm/6_kensamakard.pdf
5. ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ 2004-2010թ., էջ 69 http://stat-nkr.am/files/yearbooks/2004_2010/7_bnak_kensamak.pdf
6. ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ 2010-2016թ., էջ 77 http://stat-nkr.am/files/yearbooks/2010-2016/6_kensam_doc_73-87.pdf
7. ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Ստեփանակերտ 2016, էջ 49 http://stat-nkr.am/files/publications/2015/Axqat.pdf
8. ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Ստեփանակերտ 2017, էջ 53 http://stat-nkr.am/files/publications/2017/Axqat2016.pdf
9. ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Ստեփանակերտ 2016, էջ 49 http://stat-nkr.am/files/publications/2015/Axqat.pdf
10. ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Ստեփանակերտ 2017, էջ 53 http://stat-nkr.am/files/publications/2017/Axqat2016.pdf
11. ԼՂՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Ստեփանակերտ 2017, էջ 26 http://stat-nkr.am/files/publications/2017/Axqat2016.pdf

РЕЗЮМЕ

Доходы населения и уровень бедности в Республике Арцах

Виктория Арстамян

Ключевые слова: *население, доходы, бедность, домашнее хозяйство, оплата труда, трансферы, децильные группы.*

За прошедшие несколько лет вопросы, касающиеся уровня бедности, в той или иной мере обсуждались, изучались различными авторами и международными организациями, однако вопросы, относящиеся к уровню жизни населения, в частности отдельных социальных групп, по- прежнему требуют глубокого изучения. Этот вопрос стал предметом политических обсуждений практически во всех странах мира, и это неудивительно, поскольку успехи каждого государства определяются тем, как живет и развивается его общество.

SUMMARY

Population incomes and poverty level in the Republic of Artsakh

Viktorya Arstamyan

Keywords: *population, incomes, poverty, household, wages, transfers, decile groups*.

Over the past few years, poverty-related issues have been discussed and studied to some extent by various authors and international organizations, but issues relating to the standard of living of the population, in particular of individual social groups, still require in-depth study. This issue has been the subject of political debate in almost all countries of the world, and it is not surprising that the successes of each state are determined by how its society lives and develops.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բնակչության եկամուտները և աղքատության մակարդակը Արցախի Հանրապետությունում

Վիկտորյա Առստամյան

Վերջին մի քանի տարիների ընթացքում աղքատությանը վերաբերող հարցերը այս կամ այն չափով քննարկվել, ուսումնասիրվել են տարբեր հեղինակների ու միջազգային կազմակերպությունների կողմից, սակայն բնակչության կենսամակարդակին, մասնավորապես առանձին սոցիալական խմբերի կենսամակարդակին ու դրա բարձրացմանն ուղղված հարցերը խորը ուսումնասիրման կարիք են զգում: Այդ հարցը նաև աշխարհի գրեթե բոլոր երկրներում քաղաքական քննարկումների առարկա է դարձել, և դա զարմանալի չէ, քանի որ յուրաքանչյուր պետության հաջողությունները որոշվում են նրանով, թե ինչպես է ապրում ու զարգանում նրա հասարակությունը: